

# Կայուն քաղաքներ



Մշակող՝ Կարլա Մանուելա Ռիբեյրո Զաստատություն՝ Կամիլո Կասելո Բրանկոյի միջնակարգ դպրոց

## Ներածություն

Այս դասապլանի նպատակն է բարձրացնել իրազեկությունը կայուն քաղաքների մասին և խթանել աշակերտների տանը, փոքր և մեծ քաղաքներում քննարկումները կայուն գործունեության վերաբերյալ:

## Նպատակներ

Աշակերտները կկարողանան.

- իրականացնել հետազոտություն աշխարհի կայուն և ոչ կայուն քաղաքների վերաբերյալ,
- ներկայացնել իրենց եզրակացություններն՝ օգտագործելով տեսալսողական սարքեր,
- հանդես գալ որպես «Կայուն զարգացման» դեսպաններ իրենց քաղաքում,
- սովորել ամբողջ աշխարհի օրինակներից և զարգացնել լավագույն փորձը իրենց երկրում:

## Պահանջվող ժամանակ/ տևողություն

- **Դասարանային աշխատանք 1.** 90 րոպե ներածություն և հետազոտություն:
- **Դասարանային աշխատանք 2.** 90 րոպե ծրագրի ներկայացում և խաղի մեկնարկ:
- **Դասարանային աշխատանք 3.** 90 րոպե խաղի շրջանակներում ռացիոնալ գաղափարների մշակում:

## Անհրաժեշտ ռեսուրսներ

Նոթբուքեր, պրոյեկտոր, Մայնքրաֆթ (խաղ), youtube-ի երկու տեսանյութ, Microsoft Forms, Mentimeter հաշիվ և բջջային հեռախոսներ:



# Գործողություններ

## Դասարանային աշխատանք 1

- Ուսուցիչը ներկայացնում է թեման՝ ցույց տալով տեսանյութ էկոլոգիապես ոչ կայուն քաղաքի մասին:
- Աշակերտները պետք է նկարագրեն իրենց տեսածը և կռահեն քննարկվող հիմնական խնդիրը:
- Ուսուցիչն աշակերտներին հանձնարարում է տեսանյութի քաղաքը համեմատել այն քաղաքի հետ, որտեղ նրանք ապրում են:
- Օգտագործելով Mentimeter-ը՝ ուսուցիչն աշակերտներին խնդրում է լրացնել հետևյալ նախադասությունը՝ «Կատարյալ քաղաքը պետք է լինի/ ունենա.....»:
- Ուսուցիչը ցույց է տալիս կայուն քաղաքների օրինակներով տեսանյութ և աշակերտներին խնդրում անդրադառնալ նախորդ առաջադրանքին և իրենց պատասխաններին: Աշակերտներն այնուհետև կատարում են կարճ առցանց ուսումնասիրություն՝ փորձելով բացահայտել քաղաքներում կայուն գործելակերպը:

## Դասարանային աշխատանք 2

- Ուսուցիչը խնդրում է աշակերտներին նշել իրենց հավաքած հիմնական տարրերը և ստեղծել ինֆոգրաֆիկա Canva-ի կամ Genially-ի միջոցով:
- Ուսուցիչն աշակերտներին հարցնում է, թե արդյո՞ք նրանք կցանկանային ստեղծել կայուն քաղաք՝ իրենց հավաքած բոլոր տարրերով՝ թեմային անրադառնալով գվարճալի ձևով: Շատ ավանական է, որ աշակերտները Minecraft-ի գաղափարն առաջարկեն, քանի որ այն նրանց շրջանում սիրված խաղ է:
- Ուսուցիչը ներկայացնում է խաղը և բացատրում, թե ինչպես է այն գործում:
- Աշակերտները Minecraft-ում սկսում են կառուցել իրենց կայուն քաղաքը փոքր խմբերով:

## Դասարանային աշխատանք 3

- Աշակերտները կառուցում են իրենց կայուն քաղաքը, ներկայացնում այն դասարանին և բացատրում իրենց քաղաքում կայուն զարգացման գործունեությունը:
- Աշակերտները Mentimeter-ի միջոցով քվեարկում են այն տարբերակի օգտին, որը համարում են առավել կայուն:
- Հաղթող(ներ)ը հնարավորություն կունենան ներկայացնելու իրենց նախագիծը դպրոցական միջոցառման ժամանակ:

## Վերլուծություն և գնահատում

Գործունեության գնահատումն իրականացվում է Microsoft Forms-ի միջոցով: Աշակերտները պատասխանում են պարզ և անանուն հարցաթերթիկին՝ ցույց տալու իրենց հետաքրքրությունը դասերի և ստացած կրթության նկատմամբ:

## Դասապլանը փոփոխելու կամ հետագա ընթերցման առաջարկներ

Աշակերտները կարող են ընտրել իրենց հայտնի մեկ այլ խաղ: Նրանք կարող են հարցազրույցներ անցկացնել այն համայնքում, որտեղ ապրում են առկա խնդիրների մասին տեղեկանալու և իրենց արդյունքները հրապարակայնորեն և սոցիալական ցանցերում ներկայացնելու համար:

## Յղումներ

### Կայուն և ոչ կայուն քաղաքներ

<https://youtu.be/tNqSIZGKLiU>

<https://youtu.be/JlyPkvN4Kpw>

### ՄԱԿ-ի կայուն քաղաքներ

<https://www.unenvironment.org/regions/asia-and-pacific/regional-initiatives/supporting-resource-efficiency/sustainable-cities>

### ԿՁՆ 11

<https://www.undp.org/content/undp/en/home/sustainable-development-goals/goal-11-sustainable-cities-and-communities.html>

<https://www.un.org/sustainabledevelopment/cities/>

### ԿՁՆ-ների հրապարակում Էկո-Դպրոցների համար

<https://static1.squarespace.com/static/552bcd30e4b02ed06b97c76d/t/5beea4806d2a73433f390809/1542366371761/Eco-Schools+SDGs+Publication+-+FINAL+version.pdf>

Այս դասապլանն ընտրվել է 2020 թվականի Էկո-Դպրոցներ ծրագրի շրջանակներում, որի ընթացքում ուսուցիչներին առաջարկվել է մշակել և ներկայացնել դասապլաններ, որոնք խթանում են կոնկրետ գործողությունների վրա հիմնված մանկավարժություն՝ նվիրված Կայուն զարգացման ստույգ նպատակներին (ԿՁՆ):